

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին կ' Պոլսոյ հմր. 8 ՄՆՃ.
Գաւառաց. 10 ՄՆՃ.
Վեցամսեայ կ' Պոլսոյ 4 ՄՆՃ.
Գաւառաց. 5 ՄՆՃ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը-
լայ :

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրաց բաց ճանքու
ծախքը խմբագրութեան վրայ է :
Լրաց լրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ պրովիւն խմբագր-
— ճանքին պիտի ուղարկուի : Գաւա-
թի իսկ Ծանուցմանը հաստատուի իսկ
198, Երթ խան, Մախիսի գրասեն-
եակը :
Ճանքու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունուիր :



Լ Ե Վ Ե Դ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 15 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Քաղաքականութեան երկու մեծ
լծակներն յանկարծ կը խառնուին :
Պիսմարք և Կորնելիոս հիւանդ են,
և ահա տէրութեանց խորհրդայն վը-
րայ մեր ունեցած տկար յոյսերը կը
նուաղին, որովհետեւ տակաւին ժա-
մանակ մ'անոր գումարումն անկարե-
լի կըլլայ, քանի որ վարձէնի «պար-
կեշտ միջնորդը» Պ. Տը Պիսմարք՝ օ-
ձիկի հիւանդութեամբ կը պառկի :
Կը մնայ տեսնել թէ տէրութեանց
խորհուրդը բոլորովին ե՞տ պիտի մնայ,
թէ հիւանդ նախարարաց տեղ ուրիշ
ներանցնելով նուազ ազդեցութեամբ
և համբաւով գուցէ և նուազ յաջո-
ղութեան հաւանականութեամբ բա-
նակցութիւնները պիտի շարունակեն :
Միւս կողմանէ կըսուի թէ Սիգ-
դիական նաւատորմին Մարմարայէն
Կէլիպոլու, և Ռուսական զօրաց ալ
Ալթիէֆանտէն քաջուհեւուն համար
բանակցութիւնը կըլլան : Ռուսը կը-
սեն եղբր որ եթէ Սիգդիական նա-
ւատորմը Կէլիպոլու քաջուհի, տասն-
երկու ժամու մէջ կրնայ կ' Պոլսի դար-
բայն եթէ իրենք մինչև Ալթիանու-
պոլսի քաջուհի, թէ և երկաթուղիով
հեռաւորութիւնը տասներկու ժամ
է, բայց միայն գիծ մը կենդանու հա-
մար նոյն միջոցին տասն և հինգ հա-
զարէն աւելի զօրք չեն կրնար դրել-
հետեւաբար Ռուսաց Չաթմարք քա-
ւելուն վրայ բանակցութիւն կըլլար,
ուր Օսմանեան զօրաց և իրենց մէջ
չեղբ գիծ մը պիտի ձգուի : Այս բա-
նակցութեանց արդիւնքն ի՞նչ պիտի
ըլլայ, և ե՞րբ պիտի վերջանայ, անկա-
րելի է գուշակել, քանզի ամեն օր ան-
տէրակալ իրողութիւնը կը պատահին :

Բուժելի մէջ մնացած իսլամները,
բաւական ժամանակէ 'ի վեր Պու-
ղարներէն ու Ռուսերէն կը գանգա-
տէին, որպէս թէ զիրենք կը հայա-
ծեն, իրենց ինչքը կը կողոպտեն,
կանանց պատիւը կը բռնաբարեն, ըս-
պանութիւններ կընեն, և այլն և այլն :
Վարնայի բնակիչը Բ. Դրան աղերսա-
գիր մը ներկայացուցած էին, իրենց
գաւառին նոր Պուլլարիոյ հետ միա-
նալուն գէմ բողոքելով, ուրիշ աղեր-
սագրեր ու հեռագրեր ալ Պուլլարաց
և Ռուսաց ձեռքէն քանդատ կըլլայու-
նէին : Բ. Դրանը չեն կրնար միջամե-
տել Բուժելի մէջ մնացած իսլամները
պաշտպանելու համար, և Պուլլարիոյ
մէջ ալ տակաւին կանոնաւոր իշխանու-
թիւն հաստատուած չէր, որպէս զի
բռնութիւններն ու զեղծումները խա-
տիւ արգելուէին : Այս վիճակին մէջ
Բուժելի իսլամը, Բուժը և ուրիշ
գիւղացիներ, Ռուսաց և Պուլլարաց

գէմ ապստամբեցան, որով թրակիոյ
մեծ մասն հըր և սրոյ մատնուած է :
Արդէն Ռուսաց զօրքը քանի մը սաս-
տիկ կուրներ ըրին իսլամ ապստամ-
բաց հետ, և կը կարծուի թէ երե-
սուն հազարէն աւելի Ռուսական զօրք
ապստամբութիւնը զսպելու դադար
են : Տիմէթոքայի արեւմտեան կողմը
Սուլթան-Եէրիի լեռներէն և Մա-
րիցա գետէն սկսեալ ապստամբու-
թիւնը ծաւալած է մինչև Քրիշմայի
ձորակն, և անկէ մինչև հարաւ Ե-
գէական ծովուն եզերքն : Ապստամ-
բութեան ճարակած տեղերուն տա-
րածութիւնը տասն հազար քառա-
կուսի մըն է, և Ռուսը խիստ դժ-
ւար դործ մ'ունին իրենց առջև : Ա-
պստամբութեան պատճառ տուած
է Չիրմէն Գարա—աղած և Պէօլմէն
քէջի վրայ Պուլլարաց յարակուսմ
ու աւարաւորութիւն, և երկու ա-
մուսնացեալ կանանց և արջկան մ'ա-
ռեւանդութիւն : Արջկան հայրն ա-
ռեւանդոյն սպաննեց հրացանի հար-
ուածով, և ասկէ հետեւեալ ընդ-
հանուր ապստամբութիւն : Ապր-
տամբը չորս հատ Գրուրի թնդանթ
ունին եղբր, զորս Սիւլէյման փաշայի
բանակն յետո նահանջման միջոցին
թողած էր Ռուսի իրանց մէջ : Ապ-
րիլ 2/14 կիրակի օրէն սկսեալ Ռու-
սաց և ապստամբաց մէջ շարունակ
կուրներ կը պատահէին : Ալթիանու-
պոլսէն վեց եօթն հազար զօրք զըր-
կուեցան Օրթաքէջի մերձակայները
զանոս ապստամբաց գէմ : Տիմէթո-
քայի կողմը տասներեք հազարի չափ
Ռուսական զօրք Բուժը ապստամբաց
գէմ կը քարէն : Ապրիլ 6/18 ին սաս-
տիկ կուր մ'եղաւ և երկու կողմէն
բազմութիւ մարդիկ մեռան : Տիմէ-
թոքայի Ռուս հրամանատարն օգնու-
թիւն խնդրել է, և ամսոյ 7/19 ին
ուրաւթ օրն Ալթիանուպոլսէն երկու
երեք հազար հետեւակ զօրք և խա-
ղախներ զրկուած են Բուժը քաջ գի-
մադրելու համար : Ռուսը Չիրմէնի
կողմը տասներկու հազար զօրք և
թնդանթներ գումարած էին : Բայց
փիլիպէի և Ալթիանուպոլսոյ Ռուսա-
կան զօրքերը բաւական նուազած է-
ին զրկուած օգնութեանց պատճա-
ռաւ : Ալթիանուպոլսոյ մէջ շատ մը
մեծ տուններ պարպել արուեցան վը-
րոյիչեալ կուրներուն մէջ վիրաւոր-
եալ զօրականաց համար : Ռուսաց զին-
ւորական իշխանութիւնները կը փախ-
նային որ այս տագնապակի վիճակին
մէջ պատերազմ մը չծագի, որով Պու-
ղարներուն հարաւային կողմն իրենց
զինուորական գիւղը կրնայ վտանգի
մէջ իննալ :

Ներկայ վիճակին վրայ անհնար է
տէրակալ մը ձգել առանց սաստիկ ցաւ
զգալու : Արեւելի կրած թշուառու-
թեանց համար : Հայաստանի մէջ

Քիւրդերուն և նմանեաց գործած
անգթութիւններն յաճախ մեր ու-
շագրութիւնը դրաւած են, որպէս
զի Պուլլարաց կողմէ Երուսական
թուրքիոյ մէջ իսլամաց վրայ գործը-
ւած անգթութիւնները գաւառաւոր-
տելի չհամարին : Այս գէպերը կը
ցուցնեն միանգամ ևս թէ ապստամ-
բութեան ու բռնութեան այսպիսի
պտուղներ կը ծագին միշտ, և վրէժ-
խնդրութիւնը վրիժառութիւն կը
ծնան : Այս կերպիւ, քաղաքակըր-
թութիւնը կը կործանի և վայրենու-
թեան վիճակի կը վերագաւառնը,
ինչպէս քանի մը տարիէ 'ի վեր երե-
ւան երած ապստամբութիւնները կը
հաստատեն : « Քրիստոնէից վիճակին
բարեւոյն » անուամբ սկսեալ գործ
մը, որ վերացական կերպիւ սքանչելի
կրնայ թուիլ, իրական կերպիւ ուրիշ
բան չեղաւ, բայց եթէ բոլոր Արեւ-
ելի մէջ անհուն շփոթութիւն մը
հոն Քիւրդն անմեղ Հայերը կը ջար-
գէ, անգին Պուլլարը կապստամբի,
նախ կը հարածուի, և երբ պատեհու-
թիւն կը գտնէ, ինք իւր կողմէն հա-
լածող կըլլայ : Ո՛չ իշխանութիւն, ո՛չ
օրինապահութիւն, շատ տեղեր ալ
ո՛չ պատասխանատու պաշտօնատար-
ներ կը մնան : զեղծումներն, որոց
առաջին առնուիլ կուզուէր, և եր-
ջանկութեան դար մը կը խոտոտուէր,
ընդհակառակն աւելի կըստատկանան
և ամեն բան խառնաշփոթ կը դարձան
մը կառնու : Այսպէս քանի մը ծայ-
րայեղ ուղեղներու երեւոյցած դա-
ղափարները պետական մարդոց լուրջ
խորհուրդներուն յաղթելով աշխարհ
վեր վայր կըլլայ, և զրկելէ գեր-
մարդկային զօրութիւն մը պէտք կը-
լայ իրաց վիճակը բարեօրէնելու համար :
Թէ և ապագայն մի ինչ գոյնի չի կա-
րել չենք ուզեր, իբրեւ չարեաց գու-
շակ (բէսիմիսի), սակայն եթէ պար-
տաւերտ արժանի բան մը կայ, այն
ծայրայեղ կարծիքներն են՝ որք զօր-
ծերն այսպիսի անեղ վիճակի մը հա-
սուցին : Եթէ Ալթիէֆանտի գա-
նադրութիւնն աւելի մեղմ պայման-
ներով կընուէր, եթէ միմիայն Պու-
ղարները պաշտպանելու և զարգա-
յնելու համար Արեւելի ուրիշ տա-
րեաց իսլամներն առ ոչինչ չգըր-
ւէր, եթէ Եւրոպիոյ և քաղաքակիրթ
աշխարհին ընդունելի պայմաններ
գրուէին, կարելի է այսպիսի անսոյգ-
և անկերպարան վիճակ մը չէինք ու-
նենար, ուր ամեն տարր կը վնասի
որպէս զի Պուլլարը մ'այն շահին :

Զրոյց կայ թէ Նիքոլայ մեծ դուք-
սը զօրաց հրամանատարութիւնը թօթ-
լուէն զօրավարին թողով Բեդրու-
պուրի պիտի վերագաւառնայ : Այս ի-
րողութիւնն, եթէ ստոյգ է, հաշտու-
թեան յոյսերը կը զօրացնէ : քանզի եթէ
իրօք Ռուսիոյ և Անգլիոյ մէջ պատե-

րադմը ծախքը լրաց բաց ճանքու
Մեծ դուքսը Ռուսիա չէր վերագաւա-
նար : Սակայն միւս կողմանէ Անգլիա
իւր պատրաստութիւնները կը շարու-
նակէ, և Ռուսիա ալ անոր կը պա-
տասխանէ : Թադաժառանգ կայս-
րորդին՝ Չարլին հրամանաւ՝ Մոս-
կուայի մէջ կազմուած մասնախորհըր-
դոյ մը պիտի նախագահէ, որոյ նը-
պատակն է ազգային հանգանակու-
թիւն մը բանալ ծովասպառակ նա-
ւերու տորմիդ մը պատրաստելու հա-
մար : Այս նաւերն, եթէ պատեհաւոր
ըլլայ, ծովերու վրայ Անգլիոյ վաճա-
ռական նաւերը պիտի բռնեն : Ռուսը
Հնդկաստանի վրայ ալ արշաւանք մը
կը խորհնի նաւ : Արդ՝ այս դադա-
փարներուն ո՛րչափ գործադրելի ըլ-
լալը կրնայ հասկցուիլ անկէ, որ Ար-
լանդեան Ովկիանոսի մէջ Ռուսաց
ունեցած նաւերը թուրքօ—Ռուսա-
կան պատերազմին ժամանակ չկրնին
Ամերիկայէն թուրքիա հրացան և
առաջնութեւր բերող շոգենաւներէն
և ոչ մին բռնել : Իսկ Հնդկաստանի
արշաւանքն անհուն հեռաւորու-
թեանց պատճառաւ տոմսներով ճա-
նապարհորդութեան կը կարօտի, որոյ
համար Ռուսը ո՛չ փոխադրութեան
միջոց, ո՛չ ալ երկտական կարողութիւն
ունին : Տէպա լրաց իրը Ռուսաց այս-
պիսի երեւակայական ծրագրերը թիւ-
—վէրն Գաղղիայի վիպասանին վրայ
զուրկներուն լուսնոյ գունդին մէջ ճա-
նապարհորդելու կամ երկրագունդին
կեդրոնն իջնելու համար 'ի դործ դը-
րած միջոցներուն կը նմանին : Բայց
Ռուսիա այսպիսի ծրագրերով գոհ
չըլլար, նիւթական պատրաստութիւն-
ներ ալ կը տեսնէ : Ընդհանուր ծո-
վապետ կոստանդին մեծ դուքսը ծո-
վային պահեստի զօրաց պէտք եղած
թիւն 'ի գէն կոչից, երեք ծովային
գունդ կազմուելու համար, որոց եր-
կուքը Գրոնշմառի և մին Նիքոլայէ
Ֆի մէջ պիտի զինուորին :

Ռուսը կ' Պոլսոյ կողմն ալ մեծ
փութաշանութիւն կը զուլցնէին : Մայ-
րաքաղաքին մէջ յաղթական մուտք
մ' ընելու համար շարունակ զիհ-
յու լիմանը ձանձրացնելով Պէօլսը
տէրէի բարձունց վրայ Օսմանեան բա-
նակատեղին պարպել տուին : Աքօ-
պէլէֆ զօրավարն ըսեր է թէ Պու-
ղարներուն հարաւային կողմը Ռու-
սաց զօրութիւնն երկու հարիւր հա-
զար հոգի է : այս խօսքը կրնայ չա-
փաղանցու թիւն ըլլալ : սակայն ստոյգ-
է որ Ալթիանուպոլսէն բազմութիւ
զօրք բերելով մայրաքաղաքը կը շըր-
չապատէին : Նախորդ առաջին նա-
խարարն իմաց տուած էր Պ. Օնուի
թէ Օսմանեան հրամանատարաց հը-
րահանգ տրուած է որ Ռուսաց լոյջ
չտան սահմանեալ զիմէ մ'առաջին
անցնելու, որպէս զի կուր մը չպա-
տահի : Պ. Օնու անմիջապէս նախորդ

բարեբեր գաւառներէն մին է, և որոյ մէջ կը գտնուի վանայ լիճը: Հայ ժողովրդեան մանուկացած ծառայութեանց պատճառաւ Հայրիկ մականունն ստացած է, որ սիրելի հայր քսէր է:

Եւրոպական վերջին թղթերէն հասած Մանչեսթըրի «Էկզպրէս» թերթը անուի լրագրին մէջ Հայոց նկատմամբ հետեւեալ նամակը կը տեսնուի:

Մեծապատիւ խմբագիր: Անգլոսկոտ հարստահարութեանց լուծին ներքեւ ճնշող անմեղ ազգի մը սրտածըմ լիկ ազգակը՝ վերջապէս տկար արծառքանք մը գտնել կտիտ ազատասէր ազգի մը սրտին մէջ և քաղաքակրթեալ եւրոպիոյ դատաւորական ասեմին առջեւ: Անբնական հին ու անկեալ ազգ մը՝ իւր բոլոր զօրքն արտասուելից աչերը դէպ յԱրեւմտեաց կը դարձնէ: Արտ մը՝ որ դեռ աւրինոտ վերջերով ծածկուած է, և դարձեալ որ ազգային թշուառութեանց ներքեւ կը բարախէ, նշույլ մը կ'սպասէ անձկանք ալն պայծառ ստուղէն, որ ազատ Անգլիոյ հորիզոնին վրայ կը փայլի:

Ո՛ր կարող է դժբաղդին արտաւերջ արհամարհել անկեալ ժողովրդեան մը սիրտը վերաւորել, և արդարեւ ծայրը խափանել: Միթէ եւրոպիոյ դատաւորական արդար ատեանը—ո՛չ, միթէ անմեղաց պաշտպանը՝ Մեծն Բրիտանիա—բրէք: Մեք արեւմտեայ պատերազմի մը հանդիսատես եղանք. մայրն իւր դաւակը կորսնցուց. քոյրն իւր եղբայրն, և կիներն իւր ամուսինը, և ինչո՞ւ. —վասն զի բռնութեան ու հարստահարութեան լուծէն փրկուելու էինք, վասն զի անմեղին արտաւերջերը սրտուելու էին: Պատերազմի դաշտին վրայ թափուած արեւն շնորհիւ վերածնաւ եւրոպական թուրքիա: Հարստահարեալ իւր ընկճեալ գլուխն ազատութեան դրօշին ներքեւ բարձրացուց. իւրաքանչիւր սրտի մէջ ապագայ երջանկութեան յոյս մը ծնաւ. սակայն իւրաքանչիւրին գոհունակութեան համեմատ կրցաւ այժմ Արեւելեան խնդիրը լուծուիլ: Պաշտպանուեցան արդեօք թուրքիոյ իւրաքանչիւր Բրիտանիայ իրաւունքները. —կրնանք սա յետագայ խօսքերէն կշտադատել:

Հին ազգ մը կայ որ մեծ մասամբ Ասիական թուրքիա կը բնակի, և որ մի քանի դարերէ ի վեր իւր ազատութիւնն ու երջանկութիւնը կորուսած է. սակայն առանց ազատ ըլլալու հաւատարմիմ և առանց երջանկի ըլլալու՝ աշխատասէր և համբերող է: Իւր հաւատարմութեան իրրեւ վարձ՝ նախատինք միայն կրած է նա, և իւր համբերութեան իրրեւ փոխարինութիւն՝ գրեթէ բոլոր իրեն սիրելի և նուիրական եղածներէն զրկուած է: Շատ անգամ բողբոջեց. բայց աւագ, անտարբեր նախադրարաց և զօրաւոր պաշտօնէից սրտին մէջ արձագանգ չգտաւ իւր արդար ծայրը: Սակայն ինչպէս որ անանուն հրատարակութիւն մը կըսէ, «Իրենց (Հայոց) հնօրեայ փառաց անկումէն ետեւ ամեն տեսակ բռնութեան և հալածանաց ենթարկուելով հանդերձ, հինգ դարերէ ի վեր յաջողեցան պահել իրենց կրօնը, լեզուն և պատմական անանգութիւնը, եթէ ո՛չ, այժմ անհետացած պիտի ըլլաին»:

Այս ազգը թէպէտ դժբաղդ բայց տաւակուն մեծ և ակնածելի է իւր դժբաղդութեան մէջ: Ինչո՞ւ ուրեմն իւր երջանկութիւնը չփայլէ: Եւրոպա կը ճանչէ այս ազգը: Անգլիա և Հնդկաստան իրենց վաճառականական տկուքներովը. Գաղղիա և Վիէննա իրենց բժշկական և ուսմանական համալսարաններովը. Ռուսիա իւր քաջամարտիկ զօրաց և զօրապետաց դասուն մէջ. Օսմանեան Պետութիւնն իւր հաւատարմիմ և աշխատասէր հայաւատակց կարգին մէջ կը ճանչեն զայն. բայց Բերլին աւելի մօտէն կը ճանչէ իւր այս զօնը:

Քարասուպ, Սերփիա և Բուխարա իրենց ազատութեան դրօշը բարձրացուցին. Պուլղարք և Պոնապիք ազատ ապագայ մը պիտի վայելեն. բայց ինչո՞ւ Հայն ալ ազատ և երջանկի չպիտի ըլլայ:

Վասն զի Հայն իւր իրաւունքը զենքով պաշտպանելու ժամանակն անցած կարծեց. վասն զի Հայը կարծեց թէ 1894 դարն արդարեւ ծայրը լեզու համար արեւն թափելու պէտք չգտար. խաբուեցաւ արդեօք:

Երկու տարիէ ի վեր շարունակող աւերիչ պատերազմին պատճառն ինչ էր. միթէ թուրքիոյ հարստահարեալ քրիստոնէից փրկութեան անունով չէ՞ր: Եթէ Պուլղարք քրիստոնէայ են, միթէ Հայք ալ քրիստոնէայ չեն: Եթէ Պուլղարք հայածանք և հարստահարութիւն կրեցին, ո՛չ ապաքէն Հայք հինգ երկար դարերէ ի վեր աւելի սոսկալի և աւելի դառն հայածանաց զո՞հ եղան: Ինչո՞ւ ուրեմն Հայուն և Պուլղարին մէջ տարբերութիւն դրուի. բայց ո՛չ, չենք կարծեր և չենք կրնար հաւատալ որ այս տեսակ տարբերութիւն մը կենայ: Ռուսիա չմոռնար իւր քաջամարտիկ Հայ զօրականաց հայրենակիցքը: Անգլիա ալ չմոռնար որ այսպիսի մոռացում մը տեղի ունենայ:

Մօտեւր կնքուած դաշնագրին մէջ կը կարդանք թէ Թուրքիա՝ Հայաբնակ գաւառաց մէջ պէտք եղած բարենորոգումներն անյապաղ գործադրելու և Քիւրդերուն ու Չէքքէզներուն դէմ Հայոց ապահովութիւնն երաշխաւորելու խոստում կընէ: Բայց այսպիսի պայման մը կրնայ բաւական ասպահովութիւն համարուիլ ապագային համար: Ինչ էր պատերազմին պատճառը. միթէ կատարուելիք բարենորոգմանց նկատմամբ Աուրքիոյ խոստմանց վրայ անվստահութիւնը չէ՞ր...:

Թէ և արդէն պատերազմը վերջացաւ, բայց իսկական պատճառը պէտք եղած դարմանը չգտաւ. այսինքն թուրքիոյ բոլոր քրիստոնէից իրաւունքներն հաւասարապէս չպաշտպանուեցան:

Եթէ երբեք Եւրոպական դեսպանախորհուրդը գումարուի, չենք վերահաւատ թէ արդեօք Հայոց և Յունաց իրաւունքներն ալ պիտի պաշտպանուին այդ ատենին առջեւ: Չենք կարծեր որ Մեծն Բրիտանիա իւր իրաւունքները միայն պաշտպանելու համար հոն ներկայ գտնուի. այլ յուսարի է թէ Հայոց արդար ծայրն ալ պիտի լսուի Անգլիոյ շնորհիւ և Անգլիա՝ դժբաղդ բայց ազնիւ ազգի մ'եւրաստագէտ շնորհակալիքը պիտի վայելէ իրաւամբ:

Յուսարի որ ներկայ ձեր պատուական թերթին մէջ արձագանք մը կը գտնուի, Ննամ...:

Յ ապրիլ 1878 ՀԱՅ ՈՍՏ

Յուսք սրտի կը ծանուցանենք թէ ազգային եկեղեցական երաժրչտութեան առաջին դասատու Արիստակէս Էֆէնտի Թոհանէսեան կարծաւ հիւանդութեամբ հինգ շաբաթի օրը մահկանացուն կնքեց, և երէկ յուղարկուեցաւ իր անունով համադէպուստիոն համադէպուստիոն ալ ներկայ էր:

Հանգուցեալ Արիստակէս Էֆէնտին 40 տարեայ մօտ ժամանակէ ի վեր ազգին ծառայութիւն մատուցած է թէ՛ իրրեւ եկեղեցական երաժրչտութիւն և թէ՛ իրրեւ դասատու, միանգամայն եկեղեցական երգերն իրենց նախնի ուղղութեամբ վերածելու և աղաւաղութիւններէ պաշտպանելու համար բազում աշխատութիւն տուած և յատուկ գիրք մ'ալ շարադրած է:

Նմանապէս ցաւելով կը լսենք թէ Նոր Դար օրագրոյ խմբագիր—տէր Խօնապետեան Ոգոսէն Էֆէնտին ժամատակնէն բռնուելով հիւանդացած է: Կը մաղթենք որ անվտանգ անցունէ այս ծանր հիւանդութիւնը:

... Խմբագիր:

Յաւաքեալ Ս. Զատիկ առթիւ միմեանց այցել տալու հարկէն ազատ մնալու համար՝ ըստ բարեսիրտական սովորութեան՝ Մեծ ազգայիններէ հանգանակուած և գումարուած դրամը հրատարակուած է:

Կեղով իւր խորին շնորհակալեք կը փութայ յայտնել չորսարժուիւն առ այն Մեծ ազգային՝ որ մասնակցեցան յետագային:

Ի զիմաց Հոգաբարձ Գործակալ Հիւանդանոցի Ս. Մ. Հիւանդանոցի

Մեծ. Էֆէնտիք	20նոյց թղթով
Յովհաննէս Կիւմիւշեան	3
Ս. և Ս. Հաճոյան	3
Սերոբէ Կիւմիւշեան	3
Սարգիս	3
Գէորգ Մուրաթեան	2
Գառնիկ Ճէվանիւրեան	1
Մ. Մանուկ և Սարգիս Մանուկեան	3
Գ. Կարակէօղեան	2
Ոմն	1
Աբրահամ Կիւմիւշեան	1
Գրիգորիոս Մկրտիչեան	1
Կ. Գ. Ելմէնեան	1
Մ. Յովհաննէս Ստամպոլեան	1
Եղիա Պէյլէրեան	2
Միքայէլ Մամեան	1
Գրիգոր Կիւմիւշեան	1
Ոմն	2
Սեպուհ Մաքսուտեան	3
Սենեքերիմ Մանուկեան	3
Կ. և Ս. Ստամպոլեան	2
Ալեքսան Խօրասանեան	2
Պ. Գաբրիէլեան	1
Գ. Քըրքեճեան	1
Գառնիկ Սերգիսօֆ	1
Տըրքիոյ Գ. Նահապետեան	1
Կարապետ Քէմալիկեան	1
Գէորգ Ֆրանկիւլեան	1
Թիւսիպեան	1
Գ. Նորատուրեան	1
Աղբաշեան Մէրէմբեկ	2
Գրիգոր Նաքաշեան	1
Եղիա Շահպաղեան	1

Ա. Զ. Դ. ՄԱՍՆԱԺՈՂՈՎ ՕՍՄ. ՊԱՐՏԱՏԵԱՐԸ Ի ԹՈՒՐԻՔԻԱ

Կը ծանուցուի հասարակութեան թէ Օսմանեան պարտատեարց մարտ 9/21 ի ընդհանուր ժողովին մէջ քուէարկեալ որոշմանց մէկ օրինակը հետեւեալ հաստատութեանց ամեն մէկուն մէջ դրուած է, ստորագրութիւն ստանալու համար:

Պանք Էնրէպիալ Սթաման. Գրէտի Լիօնէզ. Պանք տը Գօնսթանթինօրլը. Սօսիէթէ Ժէնէպալ սը Լ'Անքիւ Օթաման. Գրէտի Ժէնէպալ Օթաման. Սօսիէթէ Օթաման տը Շանթ է տը Վալէօն, և Մօսիկ Ա. Զուրդի գրասենեակը Ղալաթիա Գէորգ պէյ խան, 12:

Ա. Զ. Դ. Մ. Վ. Երաննի հանրած անօթի գեղագործը պատիւ ունի իմացնելու թէ իր մեծ փողոց թիւ 77 գեղատեսիլ հոգաբարձութիւնն իր որդւոյն քիմիական և առաջին կարգի դեղագործ Մ. Ժօզէֆ Երաննի յանձնած է, ինչորիւմ յաջող հասարակութեանն որ բարեհաճի պատուել զիւր որդին նոյն փոխհաւթեամբ՝ որով կը պատուելի զինքն այսչափ տարիներէ ի վեր:

Ի. Լ. Ա. Ն. Քէօհնէ սիյահ տէօքմէ մատենաւար, գրէտ օն պին, պէհէր գրէտի օթուզ փարտ.

Սարը թէլ թօղը, գրէտ պէշ պին, պէհէր գրէտի եհտի զրուշ եկիլիմի փարա.

Քէօհնէ գաղղան սոմը, գրէտ եկիլ պին Կիլիկի, պէհէր գրէտի ալթմըշ փարա.

Խուրտէ թիմուր բարչասը, գրէտ եկիլ պին.

Պէյքօղտէ քեպին տէպպաղիսանէի ամիրէտէ մէվնետ օլուպ ֆի.

Բոլ խթ օլունմաք ի զոնէ մի զոյիտէ. յէ քօնուլուն պալատէ մուրաք ամ տէօթի քալէմ էշեանն պէհասը եկիլ. Լիւք քալիմէ. Եիլ զրուշա օլաւաք նաքտէն օլաւաք վիլիլուպ, հէման ակոզ ի տիլմէք շարիլ իլէ ֆիյաթը մուրաք ամէլէրի իլէ թալիպի էօհ. տէսինտէ օլունդու կիպի խուրտէ թիմուր բարչասը ինի տալի զուհուր իտէհէք թալիպի իլէ ֆիյաթը գաւառաշարը զալթիլէրի վէրլէրէք ֆիլուլիմ օլունմաղընտան, իշթիլ. րապնա թալիպ օլունարըն եհվմի մէք քիւրտէ Տարը Շուրալի ապքէրիլէ կէլ. մէլէրի վէ էշեալը մէք քիւրէյի կէօթ. մէք իսթէյլէրին տահա էվլէլէ տէպպաղիսանէի մէք քիւրէ միւրաճա. ալթ իլլէմէլէրի:

4 Նիսան 1878 Պապը Սերասքէրի

Խոստովանելէրտէն մատաւ, թալիլնաթ իլիւն մեղտարի քեաֆի գօ. յուն էլթի պուլմուգ մուհալ հիւքմիլէ կիրմիլ օլունարտան տօլալը. իշպու տօգտան տէօթի սէնէլի րուլիլէ մարթը իլուն, խոստովանելէրին զալթիլէ վէրլէք իլուն, զարուրի ալ. զըր էլթի գօնթրաթօնա րապթ օլուն. միլ, վէ պուլուն պէհէր գրէտի իլուն օն պիլը զուրուշ պէտէլ իլմալը գարալաշարը զըր օլունարտան, է. հապը թալիլնաթ իսթիլէ գաղղիլի սըղըր էլթի օլունաթ. մահալլէրինտէն այլէն, վէ եսիլաթ իսթէրլէր իտէ. պէհէր գրէտի զալիլէ եիլ զըրուշ հիւսալի իլէ օն պիլը զուրուշ օլունաթ. իշպուլի խաղիլէնտէն պ'տէլէն ալմալէրի լաղըմ կէլէհէլի մալիմէլէրի օլունաթ իլլէր իլան օլունուր:

14 Մարտ 1878 Պապը Սերասքէրի

Ի. Լ. Ա. Ն. Տէրատտէթ վէ պիլատը սալիսէ. տէ պուլունուպ էլթրաֆը ալքը օլուն արտալարա սիւլթրիլիլի միւլունարիլ շէլլէր տիլթրաթա վէ պուլտա սըհ. հէթի ումուլիլէյէ մաղար կէօթիլն. մէքտէ օլունարտան պատտէմա պուլմաքուլէ էլթրաֆի ալքը պուլունան արտալարըն սըհէթի ումուլիլէյէ վի. քալթիլէն էլթրաֆը տահալը թարաֆ. լարընտան թահաթէրտէ քէշիտէ օլունմաթ մի. գտտտմէն իլան իլմտիլիլ. միլ թիլ իշպուլ թահաթէրտէլէր պիլ տէրէհէյէ քատտը մէղըրի ալալալը մուհաթաղտ իլմէքտէ իտէ տէ, պուն. լարըն պաղը քէսան թարաֆընտան քօրալըրմաքտա վէ պունտան տօլալը պիլալիլէն մէղըրիլ արտալարը մուհաթաղտալը պիլ հալտէ քալթրաթա պուլունարընտան, պատտէմա մէղըրիլ արտալար ասհապալ թարաֆընտան թահաթէրտէ եէրիլէ քուրը տիլալը ինչա օլունմաթ լաղըմ կէլէհէլի վէ արտալարըն պուլտալէլէ մուհաթաղտայէ իլմիլնա իլմէյլէր օլուն իսէ նիլալը վէհէլլէ զալթիլէ իլալալը քէ. ֆիլիլէլէ իմալընա պաքտըրըլաճաղը իլան օլունուր:

94 Նիսան 12

Ի. Լ. Ա. Ն. Սապահլարը սալթ իլլէտէ Մէղար. պուլունտան հարէլէլէլ. Պէպէք. տէն տօղլու Սիլթէրի իլլէլէլիլէ վէ անտ'ն. քէօթիլլէ կէլմէքտէ օլուն 20 նուլթըրը թէրաքիլ նամ վարօր շէհ. իլ նիսանն օն պ'րիլնի սալը կիւ. նիլունտէն իլթիպարէն սապահ վէ. ալալալ Պէյլէրպէյ իլ կէլէլիլէ ալալի ուղարալաճաղը Շիլթիլ իլալիլլէ թալալընտան իլան օլունուր:

Հասեալն և բն.